

Այունյաց երկիր

Գազիկ ՀԱՅՐՈՒՄՅԱՆ

«... ԷՆ ԱՇԸՂԸ

ՄԵՐ ԴԱԴԱԼՈՒՆ

ԽՈՒՈՐՑԱՆ Ա...»

Տպագրվել է՝ 06.09.2019 թ., №18 (508) [https://syuniacyerkir.am/pdfs/No_508%20\(18\)_1567597073.pdf](https://syuniacyerkir.am/pdfs/No_508%20(18)_1567597073.pdf)

Թողարկվել է թերթի էլեկտրոնային /մեդիա/ տարբերակում՝ 17.09.2019 թ., 17:56:



Խորհրդածություններ ժողովրդական ու աշուղական երգի ներկա վիճակի, Գուսան Աշոտի կենսագրությանն առնչվող որոշ փաստերում ճշտումներ մտցնելու անհրաժեշտության շուրջ՝ «Այունյաց երկիր» թերթի հրատարակումներից մեկի առնչությամբ:

«Այունյաց երկիր» թերթի մեծարգո գլխավոր խմբագիր, հարգելի Սամվել Ալեքսանյան

Ինձ միշտ համարել եմ եւ կամ Ձեր թերթի ընկերն ու բարեկամը, այդ մասին գրել ու բարձրաձայնել եմ տարբեր առիթներով: Տպագիր պարբերականի լինելիության մեր դժվարին ժամանակներում «Այունյաց երկիրն»՝ իր կոչմանը հավատարիմ, ակնհայտորեն ունի սեփական դեմք, հոգս, ցավ, նպատակներ ու խնդիրներ եւ, որ ամենակարեւորն է՝ անզիջում կամք ու ոգի: Հատուկ համարները, որոնք հիմնականում միտված են մշակութային արժեքները կորստից փրկելու, պատմական մասունքները գիտական խորաթափանցությամբ ժողովելու եւ ամբողջացնելու վեհ նպատակներին, թերթի բարձր առաքելության բնութագիրն ու գրագիտության չափանիշն են: Կարծում եմ, որ նվիրումով ու քրտնաջան աշխատանքով սոզոնաված նման փոքրաթիվ մի կոլեկտիվի գործունեությունն իսկական սիրանք է...

Այդպիսի ջերմությամբ է ստեղծված նաեւ Գուսան Աշոտի 110-ամյակին նվիրված հոբելյանական համարը, որը նշանակալի ներդրում է մեծ գուսանի եւ աշուղական արվեստի մեկնության տիրույթում՝ ներկա եւ գալիք սերունդների համար:

Հոբեյանական համարի հրատարակման առաջին, թե երկրորդ օրը մենք հեռախոսագրույց ունեցանք: Արդեն համարը կարդացել եւ տեղադրել էի «syunik.ru» կայքում: Շնորհավորելով համարի ծնունդը, ասացի նաեւ, որ որոշ վերապահումներ ունեմ հրապարակված առանձին փաստերի առթիվ...

Առաջին հարցը, անշուշտ, այն կլինի, թե ինչո՞ւ հողվածը չի գրվել երկու տարի առաջ... Նախ. հավատացե՛ք, Գուսան Աշոտի որդու՝ Համլետ Դադայանի հետ Ձեր հարցազրույցը կարդալուց հետո երկար ժամանակ իմ մեջ ստեղծվել էր մի անորոշ վիճակ: Պարզ ու հասկանալի ճշմարտություններ, հարցեր, որոնք անձամբ ինքս տարբեր առիթներով քննարկել եմ հենց իր՝ Գուսանի հետ, «օրվա տիրոջ կողմից» ներկայացվել էին ոչ թե սխալներով, այլ՝ ամբողջությամբ շրջված: Վերջին ամիսներին լինելով Երեւանում, ծանոթանալով նոր արխիվային նյութերի, վերծանելով Գուսան Աշոտի կենսագրության հետ կապված որոշ փաստեր, կարելորվել է այդ հարցում հստակություն մտցնելը:

Տեղին եմ գտնում նշել, որ Գուսանի կենսագիրները (*Ս. Խանգաղյան, Է. Չոհրաբյան, Ա. Կարապետյան*), յուրաքանչյուրն իր հերթին, աշխատել են Գուսանի կենսագրությունը գեղեցիկ ներկայացնել, գունազարդել, որից եւ առաջ է եկել անճշտությունների մի մասը: Նրանց կրկնել է Գուսանի դուստրը՝ Արշալույս *Դադայանը* (2010 թ., «Հավերժություն» երգարանի առաջաբան) եւ հիմա էլ՝ որդին:

Առկա թյուրիմացությունների պատճառներից մեկն էլ այն է, որ Գուսանի մահից անցել է երեսուն տարի, բայց մինչեւ այժմ ընթերցողին չի հասել մեծ երգահանի գրած «Կյանքիս հեքիաթը» ինքնակենսագրականը: Համլետ Դադայանը Ձեզ ասել է, որ առայժմ հակված չեն այդ նյութերը տրամադրել որեւէ մեկին: Նմանատիպ մի պատասխան նա տարիներ առաջ տվել էր նաեւ իմ ընկերոջը, որն իմ անունից ներկայացել է կայքի համար խնդրել էր Գուսանի գրած ինքնակենսագրականը: Հարցազրույցում Դուք նրբորեն շրջանցում եք այդ խնդիրը, բայց ինչ-որ մեկը, այնուամենայնիվ, պետք է բարձրաձայնի, որ «Կյանքիս հեքիաթը» Գուսանը գրել է ոչ թե փակի տակ պահելու, այլ՝ իր երկրպագուների, ընթերցող լայն շրջանների համար...

Հիմա փորձենք վերլուծել մի քանի հանգուցային հարցեր:

Անկեղծորեն ուզում եմ ասել, որ Ձեր հարցազրույցում ինձ ամենից շատ տխրեցրել է մի արտահայտություն. «...Իսկ կայքերից մեկում էլ...»: Իհարկե, անզեն աչքն էլ տեսնում է, որ խոսքը «gusanashot.com» կայքի մասին է եւ նույն աչքն էլ նկատում է, որ հողվածագիրը կարելոր չի համարում նշել կայքի անունը... Ցավալին այն էր, որ ինձ համար շատ պատվարժան մի պարբերական անծայրածիր մեդիադաշտում չի զգում իր հերոսին ներկայացնող այդ եզակի տիրույթի դերը, նշանակությունը, կարելորությունը, որին ինքը հարյուրավոր էջեր է նվիրում... Գրողի ճանաչումն ուղիղ համեմատական է այն փաստին, թե ինչքան են ընթերցում նրա ստեղծագործությունները, իսկ երաժշտինը՝ ինչքան են լսում... Իսկ թե քանի գիրք կգրվի այդ արվեստագետի մասին, ոսկե տառերով, թե՛ արծաթե, դրանք բոլորը հավելյալ է, հրատարակումից մի քանի օր հետո դասվում է մասնագիտական գրականության շարքը, դրվում է դարակներում եւ հետո դրանից օգտվում են միայն տվյալ թեմայով զբաղվողները: Կարծում եմ, որ Գուսանի արվեստի նվիրյալների համար պետք է առաջնային լինի նրա երգերը հնարավորինս տարածելու, մասսայականացնելու, ամենուր եւ ամեն պահի լսելի դարձնելու խնդրի իրականացումը, որն էլ «gusanashot.com» կայքի գլխավոր նպատակն է: Այն միակ ձայնադարանն է, որտեղ կան անցած 80 տարիների (*սկսած 1935 թվականից*) Գուսանի բոլոր գործիքավորված եւ կատարված երգերը, բոլոր պրոֆեսիոնալ կատարումները:

Կարելոր եմ համարում նշել, որ կայքի էլեկտրոնային ծրագրավորումն իրականացվել է մոսկովյան բարձրակարգ մասնագետների կողմից, որ այն ստեղծելուց առաջ ուսումնասիրվել


Է նմանատիպ տասնյակ կայքերի կառուցվածք ու դրանցից քաղվել են լավագույն գործակիցները:

Յուրաքանչյուր երգի էջ ներկայացնում է երաժշտական ֆոնդերում եւ ինտերնետ պորտալներում պահպանված աուդիո, վիդեո ձայնագրությունը, երգի նոտաները, տեքստը, երգիչի լուսանկարը, ձեռագրման համար ընտրվել են նշանավոր նկարիչների թեմատիկ կտավներ: Եվ վերջապես՝ այն օգտագործվում է երեք լեզուներով: Արվեստագետի գեղարվեստական ժառանգության ընդգրկմամբ, ֆունկցիոնալ հնարավորություններով եւ ամբողջականությամբ նման կայքեր քիչ կան նաեւ ռուսական իրականության մեջ: Գլխավոր ուղեցույցը մեզ համար եղել է Առնո Բաբաջանյանի պաշտոնական կայքը, որն ստեղծվել է պահվում է «Առնո Բաբաջանյան» ֆոնդի կողմից:

Գուսան Աշոտի կայքը համացանց մուտք գործելուց անցել է վեց տարի: Գլխավոր էջի ներքեւում տեղակայված հաշվիչն այսօր մեզ հուշում է, որ այդ ընթացքում կայքն ունեցել է 33 690 այցելու, ովքեր լսել են 174 740 կատարում: Մեծ դահլիճներում կազմակերպված քանի՞ համերգի ծավալ ու կշիռ ունի այս թվաբանությունը... Կարծում եմ՝ անհամեատություն չի դիտվի, եթե ասեմ, որ այս գործընթացն իմ եւ մեր հայրենակից, գործարար Վարուժան Իսունցի (*ու կայքի ծրագրավորման եւ անցած ժամանակաշրջանում դու՛նե՛սի պահպանման հովանավորն է*), անձնական ներդրումն է Գուսան Աշոտի արվեստի տարածման ու մասսայականացման ճանապարհին:

Հիմա հարց է ծագում. գոհացուցի՞չ են այդ թվերը... Իհարկե՝ ոչ: Ցավով պետք է նշեմ, որ վեց տարվա ընթացքում, կայքի մասսայականացման առումով, որեւէ աշխատանք չի տարվել եւ որեւէ գովազդ չի եղել: Եթե մեր սիրելի «Սյունյաց երկիրը» վերցնէր շեֆությունը եւ իր ընթերցողներին ժամանակ առ ժամանակ հարցներ, թե նրանք ծանոթ են կայքին, այցելում են, լսում են իրեց սիրած երգերը սիրված արտիստների կատարմամբ՝ այդ թվերը կրկնապատիկ, գուցե եւ տասնապատիկ լինեին...

Իսկ երբ նայում ենք վերջին հինգ տարիների այցելությունների դինամիկային, իրավիճակն ավելի ցավալի է դառնում:



Ահա այսպես ըստ տարիների իջում է կորը (*վերնինը այցելուներն են, ներքինը՝ լսումները*):

Այս տխուր իրավիճակը պետք է համարել ոչ թե անտարբերություն Գուսան Աշոտի արվեստի, այլ՝ ժողովրդական եւ աշուղական երգի նկատմամբ՝ ընդհանրապես: Չեմ ցանկանում ծավալվել ցավոտ թեմայի մեջ, բայց այդ նպատակով պետական հիմնարար ծրագրերի բացակայության, հեռուստաալիքների այսօրվա անտարբեր պահվածքի եւ իրավիճակի համար պատասխանատու չլինելու պարագայում պատկերն այլ կերպ լինել չէր կարող:

Մենք, իհարկե, շատ տխուր ու մտահոգիչ թվաբանություն ունենք նաեւ Գուսան Աշոտի ստեղծագործությունների մասսայականացման ուղղությամբ: Վարպետի կողմից ստեղծված

ու նոտագրված ավելի քան 500 երգերից բոլոր ժամանակներում կատարվել է 80-ից էլ պակաս (շուրջ 16 տոկոսը): Դրանք հիմնականում առաջին՝ «Գուսանի սերը» եւ մասամբ էլ՝ երկրորդ՝ «Միրո կրակներ» երգարաններում զետեղված երգերն են: Երրորդ՝ «Օովաստղիկս» երգարանի 126 երգից կատարվել է միայ 6 -ը, իսկ «Հավերժությունից»՝ ոչ մի երգ: Եվս 94 երգ, որոնք կան բանաստեղծությունների ժողովածուներում, տեղ չեն գտել երգարաններում: Արդյունքում ստացվում է, որ բոլոր ժամանակներում կատարվել են Գուսանի կողմից մինչև անցած դարի 60-ական թվականները գրված երգերը, որ անվանի երգահանի կյանքի վերջին 30 տարիների ստեղծագործություններից գրեթե ոչինչ չի կատարվել: Այդ ընթացքում, անշուշտ, եղել են նոր կատարումներ, սակայն բոլոր երգիչները ձեռք են մեկնել միայն հին, արդեն հայտնի եւ մշակված երգերին:

Այս վիճակագրությունը եւ ներկայացրել եմ վեց տարի առաջ՝ կայքի խմբագրականում: Անցած ժամանակաշրջանում միայն մեկ նոր կատարում է եղել՝ ֆիննաէստոնական «Kari Ikonen» տրիոյի կողմից, որի կազմում է նաեւ հայազգի, վանաձորցի Արա Յարայանը: Խումբը գործիքավորել է կատարվել է Գուսան Աշոտի «Աստղի պես» երգը ջազային ոճում: (Այդ կատարումը տեղադրված է կայքում):

Պետք է կրկնեմ, որ եթե անցած դարակեսին Գուսան Աշոտի երգերի այսպիսի ակտիվ կատարումներ են եղել, դրա համար մենք պարտական ենք նախ՝ խորհրդային հասարակարգին, ապա՝ հայ երգի մեծ նվիրյալներ՝ Հայաստանի երգի եւ պարի պետական անսամբլի գեղարվեստական ղեկավար Թաթուլ Ալթունյանին, Հայաստանի ազգային ռադիոյի ժողովրդական գործիքների վաստակավոր անսամբլի գեղարվեստական ղեկավար Արամ Մերանգուլյանին, «Մայաթ-Նովա» աշուղական անսամբլի գեղարվեստական ղեկավար Վաղարշակ Մահակյանին: Ավելի ուշ այդ ավանդույթները շարունակել են Ստեփան Զրբաշյանը, Արմեն Մանդակունյանը, Մանվել Բեգլարյանը, Էմմա Ծատուրյանը, Թովմաս Պողոսյանը: Առանձնապես պետք է ընդգծել Հովաննես Բադայանի, Շարա Տայանի, Արմենակ Տեր-Աբրահամյանի անունները, ովքեր նոտագրելու հետ մեկտեղ դարձել են Աշոտի երգերի առաջին կատարողները: Եվ վերջապես՝ անվանի երգիչներ Օֆելյա Համբաձումյանի, Նորայր Մնացականյանի, Ֆլորա Մարտիրոսյանի, Ռուբեն Մաթեոսյանի, Վալյա Մամվելյանի, Բելլա Դարբինյանի, Բաֆֆի Հովհաննիսյանի, Լեոն Քաթրջյանի, Ռիմա Սարիբեկյանի, Սուսաննա Սաֆարյանի, Պապին Պողոսյանի եւ էլի մի խումբ երգիչների շնորհիվ է, որ անցած դարի կեսերին Գուսան Աշոտի նոր երգերը պատշաճ քանակությամբ կատարումներ են ունեցել:

Ցավալի է, բայց փաստ, որ մեր հայ կերպը ձեւավորող «ազգային արժեքներ», «ազգային մշակույթ», «ազգային բնավորություն», «հայրենասիրություն», «նվիրում» եւ նման էլի տասնյակ կենսաձեւեր արտահայտող բառեր այսօր ուրիշ արժեհամակարգում են...

Առիթ չեմ ունեցել հանդիպելու Գորիս համայնքապետ պ-ն Առուշ Առուշանյանին, բայց ունեմ տարածաշրջանի զարգացման ու մշակութային արժեքների պահպանման հետ առնչվող խնդիրների մի ընտրանի, որոնք նախատեսում եմ առաջիկայում, հանդիպման դեպքում, քննարկել նրա հետ: Դրանցից մեկը հենց այն է, ինչի մասին ուզում եմ ասել:

Անհրաժեշտ է պայմաններ ստեղծել բացելու Գուսան Աշոտի չկատարված երգերի գանձարանը, որտեղ թաքնված ստեղծագործությունները նոր որակներով ու երանգներով կներկայացնեն մեծ երաժիշտի արվեստը: Համոզված եմ, որ դրա լավագույն տարբերակը կլինի Գորիսի համայնքապետարանի կամ Սյունիքի մարզպետարանի նախաձեռնությամբ «Գուսան Աշոտ» ֆոնդի ստեղծումը, որի գլխավոր խնդիրը կլինի նպատակային գործունեություն ծավալել՝ գտնելու Գուսան Աշոտի արվեստը հարգող գործարարների, ովքեր կդառնան նրա մեկ կամ մի քանի նոր երգերի կատարման հովանավոր: Փոնդի գլխավոր գործընկերը (լուսաբանման եւ գովազդի առումով) կարող է լինել «Սյունյաց երկիր» թերթը:

Հիմա՝ Գուսան Աշոտի կենսագրությանն առնչվող մի քանի վրիպակների մասին:

Հայրս՝ Երվանդ Հայրումյանը, Աշոտի մանկության ընկերն, ասում էր, որ Աշոտը 6 թվի (1906) ծնված է: Ի դեպ, Գուսանի բոլոր հորեյանները նշելու ժամանակ, որոնք հաշվվում էին 1907 թվից, հիշել եմ հորս ասածը, բայց միշտ էլ մտածել, որ այդ թիվը չի կարող սխալ ներկայացվել, հավանաբար հայրս է ինչ-որ բան շփոթել: (Թեև նա պատմության բարձրակարգ մասնագետ էր, գրեթե անհնար էր, որ որևէ թվի, անունի, դեպքի սխալ թույլ տար): Չէի կասկածի եւ չէի փորփրի: Բայց ամեն անգամ կարդալով, որ նորածին Աշոտին տարել եւ կնքել են Տաթևի վանքում, մեղմ ասած՝ միշտ զգացել եմ, որ դա անհաջող հորինվածք է...

XX դարի սկիզբը հայ ժողովրդի եւ մասնավորապես Սյունիքի պատմության մեջ ծանր ու դժվարին ժամանակներից մեկն է եղել: Ամենուր տիրել է աղքատություն, համաճարակներ, սով, մանկական մահացությունը մի քանի անգամ մեծ է եղել նախորդ ժամանակներից, ազգամիջյան ընդհարումների ու կոտորածների սարսափելի դեպքեր են եղել՝ Մինքենդ, Ակների յայլաներ, Եռաբլուր, Սագի լիճ: Այն ժամանակ Տաթև գնալն ավելի դժվար էր, քան հիմա Երուսաղեմ, Վենետիկ կամ Վատիկան... Եվ այդ պայմաններում գրել, որ հաղթահարելով անասելի դժվարություններ (գուցե նաեւ՝ կանխազգալով, որ իր յոթերորդ կամ ութերորդ զավակը պետք է մեծ գուսան դառնա), հայրը նրան տարավ եւ կնքեց Տաթևի վանքում... Կարծում եմ՝ կատարյալ անհեթեթություն է... Համոզված լինելով, որ նման բան լինել չի կարող, այնուամենայնիվ, փորձեցի ստուգել: Հայաստանի ազգային արխիվում պահպանվում են Տաթևի վանքի այդ տարիների բոլոր չափաբերական մատյանները՝ ծնունդ եւ կնունք, ամուսնություն, մահ բաժիններով: 1907 թ. մատյանում չգտա Աշոտ Դադալյանի ծննդի եւ մկրտության գրառումը, այն չկար նաեւ մոտիկ եւ հեռու տարիներում: Եվ քանի որ գործն սկսված էր՝ որոշեցի շարունակել որոնումները: Գորիսի երեք եկեղեցիներից ոչ մեկի 1907 թ. չափաբերականներում եւս Աշոտի ծնունդը չկա: Որոշ ուսունասիրողներ նշել են նաեւ՝ 1908 թվի, թերթեցի նաեւ այդ տարվա մատյանների խունացած էջերը եւ կրկին՝ անարդյունք: Հիշեցի հորս խոսքը, որ Աշոտը 6 թվի ծնված է, պատվիրեցի գրապահոցից բերել այդ տարվա մատյանները: Ու, թեև ասվել էր՝ «...ինչպես, որ անքննելի է նրա ծննդյան թվականը...», պարզվեց, որ քննելի է եւ այս հարցում դրվեց վերջակետ:

Գորիսի սբ Լուսավորիչ նոր օծված եկեղեցու 1906 թ. մատյանի նոյեմբեր ամսվա ծնունդների եւ կնունքների բաժնում կարդում ենք.

20-ը նոյեմբերի 1906 թ.

- ծնունդ՝ Աշոտ - Հայրապետ Սարգիսի Դադալունց եւ կինը նրա՝ Բալախանում Արզումանիան ծնեց արու:

Կնունքը կատարվել է 1906 թ. նոյեմբերի 30-ին: Կնքահայր՝ Նիկողայոս Բագունց: (Բագունս Նիկոլայր, Հին Գորիսից):

«Ջխորհուրդն մկրտության» կատարել է Գարեգին քահանան (չափաբերական մատյանի հերթական թվագրություն՝ 41): (ՀԱԱ, ֆ 47, ց 5, գ. 256):

Հաջորդը: Քանի՞ զավակ է ունեցել Աշոտի հայրը՝ Դադալունց Հայրապետը: Հարցազրույցում ասվում է՝ երեք տղա եւ չորս աղջիկ: (Բհարկե, կարեւոր կլինեք թվարկել գոնե նրանց անունները, եթե պատասխանողը լավատեղյակ է):

Ծննդի եւ մկրտության արձանագրություններից հանված իմ քաղվածքներով Դադալունց Հայրապետը եւ նրա կին Բալախանումն ունեցել են 7 գրանցված ծնունդ՝ Ալեքսան (01.09.1886 թ.), Մինաս (20.04.1888 թ.), Արսեն (21.10.1894 թ.), Տիգրան (22.05.1897 թ.), Վարսենիկ (18.12.1899 թ.), Սամսոն (06.12.1902 թ.), Աշոտ (20.11.1906 - 28.01.1989 թթ.): Այսինքն՝ վեց տղա եւ մեկ աղջիկ: Հայրապետի գերեզմանաքարից մեզ հայտնի է, որ եղել է նաեւ Հայկ որդի, որի անունն իմ գրառումներում բացակայում է, ծննդյան թիվը՝ նույնպես: Ուրեմն՝ յոթ տղա եւ մեկ աղջիկ... (Հնարավոր է նաեւ, որ եղած լինեն էլի՞ ուրիշ՝ մեզ անհայտ ծնունդներ եւ իրողություններ...): Թե ի՞նչ ճակատագիր են ունեցել այս երեխաները, թե նրանցից ով ո՞ր է գնացել, քանի՞ տարի է ապրել՝ չգիտենք, կամ քիչ գիտենք նրանց մասին, բայց փաստ է, որ 3+4-ի հաշվարկն արդեն սխալ է:

Ո՞րն է այս հարցադրման իմաստը: Հնարավո՞ր էր, արդյոք, որ կնոջ մահից հետո, այդ դժվարին տարիներին, Հայրապետն ամուսնացած չլիներ (*ինչպես հաստատապես ասվում է հարցազրույցում*) եւ ապրուստի միջոցներ վաստակելու հետ միասին, վաթսունն անց շինականը կարողանար հոգալ այդպիսի բազմաշունչ ընտանիքի կենցաղային հոգսերը: Միանշանակ՝ ոչ: Խնդիրն այդպես ներկայացնելն անհավանական ու անհիմն պետք է դիտել: Փորձեցինք ստուգել: Նախ՝ անհրաժեշտ էր ճշտել Բալախանումի մահվան տարին ու օրը, ապա՝ դրան հաջորդող ժամանակներում՝ փնտրել ամուսնություն: Գորիսի երեք եկեղեցիներից երկուսում՝ Գորիս գյուղի սբ Հռիփսիմեում եւ Գորիսի սբ Լուսավորիչում 1918 թվականին Բալախանումի մահը գրանցված չէ: Իսկ Հին Գորիսի սբ Գեորգ եկեղեցու չափաբերականում այդ տարվա ննջեցյալների գրանցման էջերը չեն պահպանվել: (*Հավանական է, որ գրանցումը հենց այստեղ է եղել*): Այդ եկեղեցիների չափաբերականներում Հայրապետի նոր ամուսնության գրանցում եւս չկա: Բանականությունը հուշեց, որ պետք է փնտրել հարեւան գյուղերի եկեղեցական մատյաններում (*...որտեղից, որ նոր կինը պետք է եկած լիներ*): Բոլոր հետքերը տանում էին Քարաշեն: Այդտեղ եւս որոնումներն արդյունք չտվին, մատյանները թերի էին, պսակի էջերը՝ պակաս: Ավելի ուշ, երբ նայում էի խորհրդային առաջին տասնամյակների Գորիսի տարածաշրջանի ծնունդների, ամուսնությունների ու ապահարզանների գրանցումները՝ անակնկալները հաջորդեցին մեկը մյուսին:

1929 թ. ապրիլի 17-ին գրանցված է Հայրապետ Դադալունցի եւ ծննդով Քարաշեն գյուղացի Հռիփսիմե Դադալունցի ամուսնալուծությունը, նշված է, որ բաժանվելուց հետո յուրաքանչյուրը պետք է գրվի իր հայրական ազգանունով:

Եվ... այս անսպասելի իրողությունն ունեցավ նաեւ շատ հետաքրքիր շարունակություն: Ի զարմանս, կամ՝ հուրախություն, ի հայտ եկավ նույն տարվա՝ 1929 թ. հունիսի 29-ի ամուսնության գրանցում. 74-ամյա (*ըստ գրանցման*) Հայրապետ Դադալունցն ամուսնանում է 56-ամյա մի կնոջ հետ, որի անունը դարձյալ Բալախանում է, հայրանունն՝ Աբրահամ:

Կրկին վերադարձանալով Քարաշեն գյուղի սբ Գեորգ եկեղեցու չափաբերական մատյաններին, ճշտում ենք, որ Հռիփսիմեն, Օհանջան Արզումանիան եւ Եղիսաբետ Արզումանիան (*գրված է ըստ մատյանի*) ամուսինների դուստրն է, ծնվել է 1869 թ. ապրիլի 14-ին (*ՀՄՄ, ֆ 47, ց 3, գ. 1925*):

Այս ամենից հետո ի հայտ են գալիս էլի նոր հարցականներ... Բալախանումի մահից հետո Հայրապետի երկրորդ կինը՝ Հռիփսիմե՞ն է եղել... Նրանից ծնվել են երեխաներ... Ո՞վ է եղել Հայկի մայրը...

Չճշտված հարցերը թողնելով նոր ուսումնասիրողներին, կարելուք եմ համարում նշել էլի երկու իրողություն: Նախ. «քարաշենյան առեղծվածում» ինքնին բացահայտվեց նույն հոգեցունց տոնով գրված անհավանական մի ասեկոսե եւս, թե իբր «...վաղ հասակում զրկվելով մորից, Գուսանը Քարաշենում եղել է Շուշանանց Առաքել Արզումանի Օհանյանի գառնարածը...»: Իսկ պատասխանն ակներե է. երկրորդ մոր հետ հավանաբար գնացած կլինի Քարաշեն, այստեղ էլ, ինչպես բոլոր գյուղի տղաները, վազվզած կլինի պապի գառների հետեւից, եւ Քարաշենի հետ այդ կապն առիթ եղած կլինի հանդիպելու Աշուղ Աթային... Պետք չէ այլ սրտաճմլիկ երանգներ խառնել իրողությանը, մենք դեռ կխոսենք նրա հոր բնավորության մասին, կարծում եմ, որ այլ տարբերակներ բացառվում են...

Հաջորդը. հարցազրույցում Գուսանի պապ Արզումանին բնութագրող կրկին պաթետիկ՝ «հարուստ տոհմ», «առակասաց եւ հեքիաթասաց» արտահայտությունները կրկնելուց առաջ պետք էր ասել, թե ո՞վ էր այդ Արզումանը. ո՞ր գյուղից, ո՞ր տոհմից: XIX դարակեսին Գորիս գյուղում եւ կից բնակավայրերում նման անունով համապատասխան տարիքի եղել են՝ Երցին Արզումանը եւ Խանազարին (*Շալունց*) Արզումանը, որոնք նման անունով դուստր չեն ունեցել: Հավանական պետք է համարել, որ Բալախանումն այլ բնակավայրից է հարս եկել, ո՞ր... Այդ բնակավայրի եկեղեցու չափաբերական մատյանում պետք է փնտրել նաեւ պսակը, որը եւս չհաջողվեց գտնել... Հավանական է նաեւ, որ Գուսանի մոր իսկական անունը՝ Խանում կամ Խանա եղած լինի, քանի որ եկեղեցին Բալախանում տարբերակով գրանցում կատարած չի լինի: Կարծում եմ սխալ է նաեւ թարգմանական՝ Դիցունի, ինչպես ասվում է...

Որտե՞ղ է ծնվել Գուսան Աշոտը

Այս հարցին պատասխանելուց առաջ անհրաժեշտ է նախ իմանալ, թե ի՞նչ էր իրենից ներկայացնում XIX դարակեսի եւ XX դարասկզբի Գորիսը: Այնուհետեւ՝ տեսնել Դադայան (*Դադայուն, Դադայունց*) տոհմի կազմն ու շարժն այդ ժամանակահատվածում:

Դեռեւս 1840–ական թվականներին Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցն իր «Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան» աշխատության մեջ «Կորիս» ակնարկում գրում է. «Լայնատարած գյուղ է, [տեղակայված] անհարթ ձորակում, մերձակա լեռներից բխող մի գետի ափին: Օդն ու ջուրն առողջարար են: Բնակիչները հայեր են՝ հարյուր հիսուն տուն: Ունեն անհարթ եւ կոփածո քարերով կառուցված [մի] սագաշեն եկեղեցի: Գյուղով հոսող սրընթաց վտակը կտրելով փխրուն ժայռերն ու խոխուններ բացելով, գնում ու խառնվում է Երասխին: Տեղի բնակիչները, զանազան թշնամիների մշտական արշավանքների վախից, վաղուց լքեցին [հին] Կորիս գյուղը, որ [գտնվում է այստեղից] հյուսիս արեւմուտք, լեռան ստորոտի մի պատվական տեղում եւ [այս վայրի] ամրության պատճառով, համաձայնեցին բնակվել այստեղ»: (*Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանց, «Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան», մաս Ա, էջ 491*):

Իսկ պատմահայր Ղեւոնդ Ալիշանն իր «Միսականում» այսպես է ասում. «...եւ այժմ երեք տեղերը ճանաչվում են նման անունով, որոնցից մեկը կոչվում է Հին՝ վերելում նշվածը, լեռան ստորոտում՝ հաստատուն եւ զովասուն օդերով վայրում, բայց ոչ բավականին անվտանգ, լքված բնակիչներից, չգիտեմ՝ երբ...»: (*Ղեւոնդ Ալիշանի «Միսական, Վենետիկ 1893 թ.*):

Պատմագիր Լեոն XIX դարի 80–ական թվականների վերջին իրականացնելով իր ճամփորդությունը Սյունիք՝ Բուն Գորիսի կամ Հին Գորիսի մասին գրում է. «...Այս մի օրինավոր գյուղ է, մի հայկական գյուղ իր սեւ-սեւ տներով, աղբակույտերով, թմբի գլխին կանգնած է հին եկեղեցին, որ այժմ աչքից հեռացրած է: Բայց գյուղ չէ, այլ Գորիս գյուղի գյուղատնտեսական ագարակը (Ֆերմա): Հին ժամանակներն այստեղ է եղել բուն գյուղը, որ չգիտեմ, թե ինչու է թողել այս տեղը, գնացել է տեղավորվել ներքեւում, բիզ-բիզ քարերի տակ: (*Լեոն, երկ. Ժող., հ.8, «Սովետական գրող» հր., Երեւան. 1985թ., էջ 59*):

Հին Գորիս գյուղի քահանա Տեր-Հակովբ քահանա Տեր-Մինասյանը, որը մինչ 1906 թվականի Մինքենդի կոտորածը եղել է այդ գյուղի հոգեւոր հովիվը, իր «Հիշատակարանում» խոսելով յուր տոհմի նախնիների տեղահանության եւ բնակավայրի մասին, նշում է, որ իր պապ Մինաս քահանան ծնվել է Գորիս գյուղում, իսկ նրանց մեծ պապը՝ Մինասանց Թունին «... Դոքա Հին Գորիսից տաճիկների եւ պարսիկների ասպատակությունների ժամանակները ապաստանած են եղել Գորիս գյուղից բարձր ձորակում, որտեղին Ծակերի ձոր են ասում, նույնպես եւ Շորջի Օոր են ասում...»:

«Հիշատակարանի» առթիվ իր մեկնաբանության մեջ Ս.Խանգաղյանը գրում է. «Կոտորածից (Մինքենդի) հետո Հակովբը բնակվել է այստեղ (Հին Գորիսում): Գորիս գյուղի (քաղաքի), Հին Գորիսի (Երի Շեն) եւ սրան գրեթե կից Բուն (Պռունկ) գյուղի բնակիչները միեւնույն տոհմերից են»: (*Ս.Խանգաղյան, «Տեր-Հակովբ Տեր-Մինասյան գորիսեցու «Հիշատակարանը», էջ 125, «Բանբեր Հայաստանի արխիվների», թիվ 2, 1989*):

Եվ այս ամենով հանդերձ, ողջ պատմությունը համառոտ հետեւյալն է: XVII դարավերջի եւ XVIII դարասկզբի Գորիսի (*Բուն Գորիսի*) կոտորածից հետո բնակավայրը երկար ժամանակ մնում է անմարդաբնակ, այնուհետեւ դառնում է դավանափոխ կապիտան Ռուստամ բեկի եւ նրա դավանափոխ մոր 6 գյուղերից եւ 9 ձմեռանոցներից մեկը, բնակեցվում է մուսուլման քոչվորներով եւ տրվում է Գեղիշա անունը: (*Տե՛ս՝ Ստ. Լիսիցյան, «Ձանգեզուրի հայերը» ՀԳԱ հրատ., Երեւան, 1969*): Բռնագաղթված հայկական մյուս բնակավայրերի եկեղեցիների ճակատագիրն է ունենում նաեւ IV-V դարի կառույց սբ Հռիփսիմե հոգեւորական համալիրը: Թաթար-թուրքերը փոխում են գլխավոր եկեղեցու մուտքը, դարձնում մզկիթ: XIX դարի 30–ական թվականներին քաղաքական իրավիճակի փոփոխության եւ զարգացումներում վտանգ զգալու միտումով մուսուլմանները կամովի հեռանում են բնակավայրից: Շուրջ երկու տասնամյակ հայերը ռիսկ չեն անում վերադառնալ իրենց նախկին բնակատեղին, եւ հաս ու

կենտ անասնապահներ են ժամանակավոր բնակվում այստեղ: 40-50-ական թվականներին Գորիս գյուղի տարածքի նեղ լինելու պատճառով մի շարք ընտանիքներ կիսվում, տեղափոխվում եւ զբաղեցնում են արդեն պատրաստի կառուցված տները, դաբերը, քարատակները, կառուցում են նոր տներ: Երկրորդ փուլում այստեղ վերաբնակվել ցանկացողների համար արդեն տեղ չի լինում, գնում եւ զբաղեցնում են ձորի արեւմտյան կողմի բլուրը, հիմնադրում են Բռունը: Իսկ ահա երրորդ հոսքով Գորիս գյուղից եւ Մինդարս բնակավայրից տեղափոխվածները (*1890-1900 թթ., 16 ընտանիք*), Երի շենի արեւելյան ձորալանջին փորում են նոր ժայռատներ, ստեղծվում է Ծյորի թաղը: Բոլոր չորս բնակավայրերը (*Գորիս գյուղը, քաղաքը, Հին Գորիսը եւ Բռունը*) մինչեւ խորհրդային կարգերը եղել են նույն համայնքի կազմում: Մինչեւ 1900 թվականը ծնունդների, կնունքների, ամուսնությունների ու մահվան գրանցումները կատարվել են միայն Գորիս գյուղի սբ Հռիփսիմե եկեղեցում: 1900-ից, հյուսիսային համայնքներն համեմատաբար խոշորանալու եւ տարածաշրջանում վտանգներն ավելանալու պատճառով, Հին Գորիսի սբ Գեորգ (*Նորակնունք*) եկեղեցուն եւս, իսկ 1903 թ.՝ նորակառույց սբ Գրիգոր լուսավորիչ եկեղեցուն թույլատրվել է կատարել այդ ծիսակարգերը: Եկեղեցու ընտրությունը չի սահմանափակվել, արարողակարգերը կատարել են՝ ով որտեղ ցանկացել է: Գորիս բնակավայրի վերին շեն եւ ներքի շեն արտահայտություններն օգտագործվել են իբրեւ ոչ հատուկ անուններ, իբրեւ նույն շենի երկու մասեր: Իսկ Վերիշեն ձեւը, առանց համայնքի հետ համաձայնեցնելու, շրջանի ղեկավարների կողմից տրվել է խորհրդային տնտեսությանը, երբ Հին Գորիսի «Կարմիր հոկտեմբեր» կոլտնտեսությունը վերակազմավորվել եւ դարձել է Վերիշենի կաթնանասնապահական սովխոզ (*1957 թ.*): Գյուղական խորհրդի կնիքը փոխվել է դրանից ավելի քան 20 տարի հետո՝ 1979-1980 թվականներին (*Հին Գորիսի փոխարեն գրվել է՝ Վերիշեն*), եւ այն էլ, հավանաբար, ինչ-որ մի ղեկավարի ցուցումով կամ գրությամբ, քանի որ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նման հրամանագիր գոյություն չունի:

Հիմա՝ Դադայանների մասին: Տոհմի նախահայրը՝ Դադայը (*ըստ 1832-1933, 1842, 1848 թվականների մարդահամարների*) եղել է գորիսեցի Սիմոնանց Վարդանի որդին, ապրել է 1790-1860 թվականներին: Սերունդ թողած նրա ժառանգներն են՝ Բաղդասարը, Պետրոսն ու Պողոսը (*երկրորդ կնջից*): Նրանցից Բաղդասարի ընտանիքը XIX դարի կեսին, գյուղի վերաբնակեցման առաջին փուլում, առաջիններից մեկը տեղափոխվել է Հին Գորիս, դարձել է ունեցվածքի տեր, ավելի ուշ կառուցել Դադայանների հայտնի տունը, այստեղ էլ բազմացել ու աճել է նրա սերունդը, իսկ Պետրոսի ու Պողոսի գերդաստանները մնացել ու ճյուղավորվել են Գորիս գյուղում, ապա՝ Գորիս քաղաքում: Ահա սա է տոհմի սերունդների տեղաբաշխման նկարագիրը:

Գուսանին մի անգամ հարցրի, թե ինչ^օ ու որեւէ առիթով չի նշում, որ ինքը Հին Գորիսում է ծնվել:

- Դա նույն Գորիսն ա էլի՞, - զարմացավ Գուսանը, - է՛ս փողոցում ապրած թե՛ է՛ն, ի՞նչ տարբերություն կա, դա կնշանակի, որ ես մեր բնակավայրը բաժան-բաժան եմ անում...

Գուցե նաեւ, մինչ այդ, ես այդպիսի խորությամբ չէի պատկերացնում հարցի էությունը...

Հիմա խոսենք Բաղդասարի (*1813-1847 թթ.*), սերնդի մասին ավելի մանրամասն: Ունեցել է մեզ հայտնի ժառանգներ՝ Սարգիս (*1836 թ., մ.թ. ճշտված չէ, 1874 թ. մարդահամարում հաշվառված չէ*), Հարություն (*1839-1892 թթ.*), Մարիա (*1940 թ., մ.փ.հ.*), Մկրտիչ (*1841-1870 թթ.*), Նազի (*1845-1920 թթ., Հարություն Խուրշուղյանի կինը, Ակսել Բակունցի տատը*): Սարգսի սերնդից ճյուղավորվել է Հայրապետը՝ Գուսան Աշոտի հայրը, ով, ինչպես ասացինք, ունեցել է առնվազն ինը երեխա: Հարությունի ընտանիքի մեզ հայտնի վեց ծնունդներից ճյուղավորվել են՝ Գալուստը (*16 երեխա՝ 8 տղա եւ 8 աղջիկ*), Դանիելը (*6 երեխա՝ 4 տղա եւ 2 աղջիկ*), եւ Վարդանը (*9 երեխա՝ 2 տղա եւ 7 աղջիկ*): Երբ որոշ հարցեր ճշտում էի Դանիելի թոռ, 73-ամյա երեւանաբնակ Վարազդատ Դադայանի հետ, ասաց, որ Գուսանն իրեն «կուճի ամի» էր ասում:

Գուսան Աշոտի որդու՝ Ռուբեն Դադայանի հետմահու տպագրված «Անավարտ քնար» ժողովածուում այսպիսի մի քառյակ կա.

*Պապս Հիսուսի նման մի մարդ էր,
Բայց ոչ խաչ ուներ, ոչ էլ՝ պատարագ,
Պապս նամուսի պատվարժան մարդ էր,
Ռանչպար էր, չուներ ոչ արտ, ոչ մարագ:*

Այս մի քանի տողը խիստ բնութագրական, տեղին եւ ճշմարիտ ներկայացնում է Գուսանի հորը՝ Հայրապետ Դադայանին, նրա բնավորությունն ու ապրելաձևը: «Մարթ մարդ է եղել», ասում էր պապս: Այսինքն՝ խիստ, կծու, իր ասածի տեր, թերությունների հետ չհաշտվող: Նա այդպիսին եղել է նաեւ տանը՝ կնոջ եւ երեխաների հետ, հորեղբոր տղաների հետ հարաբերություններում, որոնց մոտ հիմնականում աշխատել է: Հայրապետի ավագ որդիները, որոնց մասին չափաբերական մատյանները համառորեն լռում են, կարծում եմ, չափահաս դառնալուց հետո (*ոչ միայն Տիգրանը*), ընտանեկան ծանր պայմանների պատճառով, մեկնել են արտագնա աշխատանքի, կարծում եմ՝ Բաքու եւ հավանական եմ համարում, որ «սեւ հրեշք» կույլ է տվել նաեւ նրանց:

Դադայաններից գլխավոր սեփականատերը Հին Գորիսում Վարդան Դադայանն է եղել (*բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Դադայանի հայրը*), որի տնտեսությունում աշխատել են նաեւ Հայրապետը, նրա առաջին, ապա՝ երկրորդ կանայք: Թեեւ ծագող վեճերից հետո Հայրապետը հաճախ է թողել ու հեռացել, բայց Վարդանը երբեք բախտի քմահաճույքին չի թողել նրա ընտանիքը: Ակներ սարի Դադալունց յայլաներում Բալախանումը եղել է Վարդանի կնոջ՝ Մանուշակի աջ ձեռքը, գլխավոր օգնականը: Մի առիթով Գուսանը պատմեց, թե 1915 թ. ամռանը, երբ չորս աղջիկ ունենալուց հետո Վարդանի կին Մանուշակը ծնեց Վազգենին, ինչ քեֆ-ուրախություն էր Իշխանասարի յայլաներում, Վարդանին ծանոթ քանի տասնյակ ձիավոր էր ոչխարներով եկել աչքալուսանքի...

Դադայանների հայտնի տան աջ կողմում՝ մեծ պատշգամբի վրա բացվող սենյակներում՝ ապրել է Վարդանի ընտանիքը, շենքի ձախ հատվածի սենյակները եւ պատշգամբը զբաղեցրել է Գալուստի գերդաստանը (*այս պատշգամբում 1921 թվականի հունիսի 25-ին դաշնակները սպանել են Տեր-Հակոբ Տեր-Մինասյան քահանային, նրա որդուն՝ գյուղի հեղկոմի նախագահ Մուշեղ Մինասյանին, ծանր վիավորել են տերտերի կնոջը՝ Դիանային*): Նույն շենքի առաջին հարկի աջ դուռն ու պատուհանը թոնրատունն է եղել, իսկ կամարակապ դաբից ներս գնացող դռները տարել են սենյակ, որտեղ ապրել է Հայրապետի ընտանիքը, եւ քարատակ-մառան...

Ի դեպ՝ «կամարակապ» բառը հիշեցրեց՝ չմոռանալ. Գուսանի մասին Անդրանիկ Կարապետյանի ուսումնասիրության մեջ, ներկայացնելով Հայրապետին, հեղինակն ասում է. **«... հողագործ լինելուց բացի նաեւ ճանաչված որմնադիր էր: Հին Գորիսի** (*ընդգծումն իմն է՝ Գ.Ն.*) **կամարակապ շատ տներ եւ այլ կառույցներ նրա ձեռքի դրոշմն են կրում**»: Հիշենք, որ Ա. Կարապետյանը միակ ուսումնասիրողն էր, որ կարդացել է օգտվել էր Գուսանի «Կյանքիս հեքիաթը» ինքնակենսագրականից եւ արտահայտությունը, հավանաբար, վերցրված է հենց այնտեղից: Իսկ ահա հարցազրույցում «Հին Գորիսը» դարձել է Գորիս...

Զանգեզուրի խորհրդայնացումից հետո Հին Գորիս գյուղի հեղափոխական կոմիտեի առաջին գործը եղել է հանրակրթական նոր դպրոցի ստեղծումն ու անգրագիտության վերացումը: Առաջին տարում դպրոցը գործել է Վարդան Դադայանի տանը: Առաջին դասարանի առաջին աշակերտներից է եղել նաեւ հայրս: Նա պատմում էր, որ քանի որ այդ տարիներին գյուղի եկեղեցու տնտեսական հարցերի պատասխանատուն Հայրապետ Դադայանն էր, եւ դպրոցն էլ իրենց տանն էր, նրան էր հանձնարարվել հոգալ նաեւ դպրոցի տնտեսական հոգսերը՝ փայտ ջարդել, վառարանը վառել, ջուր բերել, սեղան-նստարանները տեղադրել, նորոգել եւ այլն... Պատմում էր, թե ինչ խստաբարո մարդ էր եւ ինչպիսի պատասխանատվությամբ էր կատարում իր գործը...

Աշոտի բանաստեղծական արվեստն ուսումնասիրողների համար նշեմ, որ իր երգերում մեծ գուսանն անդրադարձել է գրեթե բոլոր հայոց սիմվոլներին ու սրբություններին՝ Արարատ, Արագած, Արաքս, Մեւան, Հրազդան, Ռոտան, Սյունիք, Ղարաբաղ, Անի, Շիրակ, Զավախք, Երեւան, Շուշի եւ այլն, բայց իբրեւ տեղանուն, իբրեւ իր սիրո, իր խաղերի, իր

նվիրական իդեերի կատարման, իրականացման վայր ակնարկել է միայն իր մանկության վայրերը՝ «Աղջիկները Մանդ աղբյուրից ջուր կառնեն, Մեկ սիրտ կտան, մեկ էլ սիրտս կտանեն...» (*«Ինչ լավ է»*), «Մըն յեկ իրուր խտտենք Ափուն թառումը», «Էլ ծուն չի կա, Մեծ ըռոնին թախկալ ա», «Ակնին ճյուրը քլթթալի քյունում ա», «Եկ նստենք Ղուրուղա թիփին ղնշարումը» (*«Չոր չոլերը ծաղկել են»*), «Միաջառի քեղի գոխը, իմ պապը արածանով էր ուտում» (*«Միաջառի քեղուտում»*), «Էս գիշեր իմ երագին ելա սարը Իշխանա, Աշոտ յայլան քո պապի հոգուդ երգեր կկապի» (*«Մորս փեշը բռնած»*), «Հարայ են տամ, ինձ կանչում Ակներ յայլան Դադալունց» (*«Ակներ յայլան Դադալունց»*), «Որսաձորի արձագանքով հմայված» (*Որսաձոր, Ավու դարա, «Մագու մնաց»*), «Մեւանի քույր՝ ծովակ Իշխանա» (*«Ծովակ Իշխանա»*), «Ուխտ եմ արել, այ սարեր, Գորիսից մինչ լույս Ակներ, Մեղան բացեմ տոն օրվա, Երգով մաղթեմ կենացներ» (*«Երագանքիս կհասնեն»*): Այս ընտրանին Գուսան Աշոտի միայն երկու ժողովածուներից է քաղված, դրանք մեծ քանակությամբ կան նաեւ մյուս երգարաններում:



Ափուն թառը



Մեծ ըռոնի

Մանդ աղբյուր

Նկ.՝ Մայիս Զադայանի

Այս ամենը, անշուշտ, համոզիչ փաստեր են, բայց ինքս էլ գիտեի, որ դրանք անվիճելի դարձնելու համար, այնուամենայնիվ, բացակայում է ամենագլխավորը՝ ինչ որ վկայություն, որտեղ սեւով սպիտակի վրա գրված պիտի լինի, որ այդ տարիներին Հայրապետ Դադայանը եղել է Հին Գորիս գյուղի բնակիչ, համայնքի անդամ, ինչ որ ունեցվածքի տեր, կամ նման մի բան... Խնդիրը բարդ էր, քանի որ այդ տարիներին մարդահամար չէր եղել, Հայրապետը հողատեր չի եղել, իսկ համայնքների բնակիչների ամբողջական ցուցակներ արխիվներում չկան: Նայեցի հավանական մի շարք աղբյուրներ՝ անարդյունք... Եվ ինչպես ժողովուրդն է ասում՝ ճշմարտություններն անթեղվում են, բայց չեն մեռնում... Ամիսներ առաջ ՀՀ ազգային գրադարանում թերթում էի XX դարասկզբի Գորիսում լույս տեսած պարբերականների արխիվները, եւ ի՞նչ... Գտնվեց «Բարաթը»...

«Կարմիր ռաշպար» գավառային թերթի, 1924 թ. օգոստոսի 29 –ի, թիվ 29 համարում տպագրված թղթակցությունը, որը մեջ եմ բերում ամբողջությամբ, ցույց է տալիս ոչ միայն Հայրապետ Դադայանի՝ Հին Գորիսի համայնքի անդամ լինելը, այլև՝ նրա հեղինակությունն այդ համայնքի կազմում (*ցուցակում համայնքի ներկայացուցիչ երեքից առաջինը գյուղխորհրդի նախագահ է դարձել նշված Ասատուրից հետո, երկրորդը՝ մինչխորհրդային կարգերը եղել է գյուղի տանուտերը՝ քոխվան եւ երրորդը՝ ինքն է*):

*«1924 թ. սկզբին նորաստեղծ խորհրդային երկիրն ընդունեց որոշում պետական ապահովագրության մասին: Հին Գորիսում համայնքի ժողովը առաջիններից մեկը որոշեց ապահովել գյուղի բոլոր ցանքերը, շինություններն ու անասունները բնական աղետներից ու չարիքներից: Ապրիլի 30-ին Հին Գորիսի ուղղությամբ կարկուտ եկավ: Պետական ապահովագրության գործակալն անմիջապես գնաց Հին Գորիս գյուղը եւ համայնքի ներկայացուցիչների հետ կազմեց հետևյալ արձանագրությունը. «Մենք ներքո ստորագրողներս՝ Պետապի Զանգեզուրի գործակալ Արտավազդ Ավագյան, գյուղխորհրդի նախագահ Ասատուր Մաֆարյան, Պետապի կողմից՝ գյուղատնտես Հակոբ Միրաքյանի, Հին Գորիս գյուղի կողմից՝ Ասատուր Մաշուրյանի, Արգար Խուրշուդյանի, **Հայրապետ Դադայանի** (ընդգծումներն իմն է՝ Գ.Հ.) ներկայությամբ շրջեցինք Հին Գորիսի ցանքերը եւ գտանք, որ ապրիլի 30-ին, 1924 թ., երեկոյան ժ. 6-ին, 15 րոպե տեղացել է կարկուտ հյուսիս-արեւմուտքից հարավ-արեւելք ուղղությամբ 208,33 դեյաստին տարածության վրա: Կանաչների կարճ ծիլերի պատճառով վնասներ չեն եղել:*

Քննիչ հանձնաժողովը գտավ, որ Հին Գորիսի ցանքերը եկած կարկուտից վնաս չեն ստացել, որի համար եւ ստորագրում ենք. (ստորագրությունները)»: («Կարմիր ռաշպար» թերթի 29 օգոստոսի 1924 թ. թիվ 29):

Կարծում եմ, որ հիմա արդեն կարող ենք ամփոփել: Աշտուր սովորել է Հին Գորիս գյուղի եկեղեցուն կից ծխական դպրոցում, ամենայն հավանականությամբ՝ Բագրատ Առուշանյանի հետ (*հետագայում՝ խորհրդային բանակի գեներալ-լեյտենանտ*): Ժամանակաշրջանը թելադրում է եզրակացնել նաեւ, որ նրանց ուսուցիչը պետք է եղած լինի հայերենին լավ տիրապետող ուսյալ մի երիտասարդ, հետագայում ցարական բանակի սպա՝ Կարապետ Բաբայանը, ով զոհվել է Առաջին համաշխարհային պատերազմում: Եվ, իմ կարծիքով, Աշտուրի լեզվի մաքրությունը հենց այս ակունքն ունի: Մեզ հայտնի է, որ մոր մահից երկու տարի հետո՝ 1920 թ., Աշտուր մեկնել է Բաքու՝ եղբոր մոտ: Նա բաներիս դպրոց է հաճախել, սովորել է նաեւ քյամանչա նվագել: Երիտասարդ հասակում ունենալով առողջական խնդիրներ, բանակ չէր զորակոչվել, «անպիտանի էր» նաեւ նավթարդյունաբերության բնագավառում աշխատելու համար: Աշտուրի խաղաղ ու հանգիստ բնավորությունը շուտով անհամատեղելի է դառնում «սեւ քաղաքին»: Նա ձգտում էր ժամ առաջ վերադառնալ, բայց ո՞ր... Հին Գորիսը ծանր, ֆիզիկական աշխատանքի փակուղի էր, իսկ ահա Գորիս քաղաքը զարգանում էր, անցուղարձը մեծ էր, մտածում են, որ նա կարող է այդտեղ սազանդար լինել եւ վաստակել... Եղբայրը՝ Տիգրանը, ներ է դնում իր ողջ հնարավորությունները եւ Գորիս քաղաքում Աշտուրի համար գնում փոքրիկ տնակով հողամաս: Այդ ժամանակ նրանց հայրը՝ Հայրապետը, որը գյուղում ոչ մի սեփականություն չուներ եւ արդեն 74 տարեկան էր, բատրակ (*նախրապան*) էր Գորիսի այն նույն տանը, որ հարցազրույցում նշվում է իբրեւ Աշտուրի ծնված տուն (*կարծում եմ՝ հնարավոր է ճշտել տանտիրոջ անունը, ում մոտ բատրակ է եղել Հայրապետը*):

Գուսանի ամուսնությունը

«18-20 տարեկան էի, սիրում էի առաջին անգամ: Մեւ, կրակի պես աչքեր ուներ նա, երկար մազեր: Բայց մեզ բաժանեցին...»:

Գորիսում՝ Գուսան Աշտուրի ծննդյան 70, թե՛ 75-ամյակի տոնակատարության ժամանակ վարպետի ահա այս խոսքերով սկսեց իր ելույթը Հայաստանի գրողների միության նախագահ, գրող, հրապարակախոս Վարդգես Պետրոսյանը (*այդ խոսքը կա «Մյունխեն երկրի» հոբելյանական համարում*):

Աշոտի Բաքվում եղած տարիներին ծնողներն ամուսնացնում են նրա սիրած աղջկան: Վերադառնալուց հետո հոգսերը շատ էին, մի քանի տարի չի ամուսնանում՝ մինչև հանդիպում է սիրում է Գորիսի մանկավարժական տեխնիկումն ավարտած մի գեղեցկուհու՝ Հասմիկին՝ Բայանդուր (*Վաղատուր*) գյուղացի Մանաս Քալանթարյանի դստերը: Ամուսնությունը տեղի է ունեցել 1934 թ. սեպտեմբերի 8-ին: Այդ ժամանակ Աշոտը 28 տարեկան էր, Հասմիկը՝ 17: Նրանց ամուսնական կյանքում, ինչպես գիտենք, ծնվել են 3 զավակ՝ Ռուբենը, Արաքսյան է. Համլետը: Հայտնի է նաև, որ շուտով խաթարվել է ընտանիքի երջանկությունը. երիտասարդ մոր ու սիրելի կնոջ մոտ ախտորոշվել է անբուժելի հիվանդություն: Հասմիկը հրաժեշտ է տվել կյանքին ընդամենը 27 տարեկան հասակում՝ 1944 թվականին:

Աշխենը

Կնոջ մահից հետո ծանր ժամանակներ են եղել Աշոտի համար. երեք անչափահաս երեխաներ, պատերազմ, սով ու աղքատություն... Եկավ հաղթանակը, նրա հետ՝ հավատն ու հույսը... Շուտով Գորիսում հայտնվեց երկարահյուս, խիտ ունքերով, թխադեմ մի հայուհի՝ շրջանային գյուղբաժնի գյուղատնտես Աշխեն Խաչատրյանը: Նա շինուհայրցի Ղվալին Բաղդասարի թոռնուհին էր, Գրիգորի դուստրը: Ծնվել է 1922 թվականին՝ Բաքու քաղաքում, այդտեղ էլ կրթություն է ստացել՝ ագրոնոմի մասնագիտություն: Երբ սկսվել է Մեծ հայրենականը, երբ երկիրը պատերազմի մեջ է եղել, նա նստել է սպասել չէր կարող, գտել է, որ իր տեղը ճակատային գիծն է, մեկնել է պաշտպանելու հայրենիքը: Միլիոնների, նաև նրա կամքի ու արիության շնորհիվ եկել է հաղթանակը: Պատերազմից տուն վերադառնալուց հետո որոշել է ծնողների հետ զավ հայրենիք, այստեղ ապրել է աշխատել, իմացածը ծառայեցնել շրջանի գյուղատնտեսության զարգացման գործին, ամուսնանալ, ստեղծել խաղաղ ու երջանիկ ընտանիք: Եվ կյանքում տասնյակ արհավիրք ու փորձություն հաղթահարած աղջիկը բոլոր հնարավոր տարբերակներից ընտրել է ամենադժվարը՝ ընդունել է Գուսանի սիրո ու ամուսնության առաջարկը է. միանգամից դարձել երեք անչափահաս երեխաների մայր: Երաժշտական բնատուր ունակությունների շնորհիվ, Գուսանի օգնությամբ, շուտով Աշխենը սկսել է նվագել երաժշտական գործիքներով, երգել, համերգային շրջագայությունների ժամանակ ուղեկցել ամուսնուն: 1951 թվականին տեղի է ունեցել մի նոր չարաբաստիկ ողբերգություն: Կյոբու գյուղի համար քարաղ տեղափոխող բեռնատարը, որի թափքում են եղել համերգի գնացող Գուսան Աշոտի խմբի անդամները, ճանապարհին վթարի է ենթարկվել, Աշոտը վիրավորվել է, իսկ Աշխենը՝ զոհվել...





Շինուհարյան մեր որոնումների արդյունքում հնարավոր եղավ գտնել Աշխենի ազգականներին, որոնց միջոցով էլ՝ այս թանկարժեք մատույնները, նրանից մնացած այս մի քանի լուսանկարը...

Արաքսյա Ղալեյանի մասին

Այդ մեծ, արմատական ու ամբողջական գործին ծանոթանալուց հետո (*խոսքը հատուկ համարի մասին է*) ավստասնք եմ ապրել, որ առանձին հողվածով չի ներկայացվել տիկին Արաքսյան՝ Գուսանի շուրջ 30 տարվա կյանքի եւ համերգային շրջագայությունների ընկերուհին, նրա նոր երգերի առաջին ունկնդիրն ու կատարողը: Տեսնել էր պետք, թե նա ինչպիսի զգուշությամբ էր որսում Գուսանի շուրթերից դուրս եկող նոր մեղեդին եւ կրկին արտաբերում այն... Միայն իրենց հասկանալի լեզվով՝ բառերի հետադարձ արտասանությամբ, նրանք կես խոսքից իրար հասկանում եւ ժպտում էին... Տարբեր երկրներից, մայրաքաղաքից եկած քանի-քանի մարդկանց է նա ընդունել իրենց հարկի տակ, հյուրասիրել Գուսանի՝ «կոնիվներում հաղթած» գինով, քյամանչայի նվագակցությամբ կատարել Աշոտի երգերը եւ անջնջելի տպավորություններով ճանապարհել հյուրերին: Գուսանի ընտանիքին մոտիկ մարդիկ լավատեղյակ են, որ նրանք սիրող ամուսիններ են եղել, որ Գուսանը երկար տարիներ տառապել է ոչ թեթեւ հիվանդություններով եւ, որ նրա երկարակեցությունն առաջին հերթին տիկին Արաքսիայի նվիրումով ու հոգատարությամբ էր պայմանավորված:

Երբ փորձեցի իմանալ Գուսանի մահից հետո այդ համեստ ու բարի կնոջ ապրած կյանքի պատմությունը, գորիսյան իմ բոլոր հարցումներն ապարդյուն անցան: Ոչ ոք ոչինչ չգիտեր: Դիմեցի համացանցի օգնությանը: Մի շարք նամակների ու հեռախոսազանգերի արդյունքում Երեւանի էստրադային եւ ջազային արվեստի պետական քոլեջի աշխատակցուհի Կարին Դադյանի (*նույն ազգանունը կրող Արաքսյայի զավակների հետ ազգակցական կապ չունի*) եւ Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի դերասանուհի Ժասմեն Ասրյանի օգնությամբ հաջողվեց կապվել Արաքսյայի թոռնուհու՝ Գայանե Թելունցի (*Մյուզաննա Դադյանի դստեր, հայրը Խնձորեսկի Թելունցներից է*) հետ: Նա էլ ինձ օգնեց գտնելու Հրազդանում բնակվող, իրավիճակին ավելի լավատեղյակ Սիրանուշին՝ Արաքսյայի կրտսեր դստերը:

Ավելորդ չի լինի, եթե համառոտ ներկայացնեմ ինձ մոտ հավաքված տեղեկություններն Արաքսյայի մասին, քանի որ որեւէ տեղ դրանք չեմ հանդիպել:

Արաքսյա Մինասի Ղալեյանը ծնվել է Կարմիրի շրջանի Նոր Բաշքենդ (*Գեղարքունիքի մարզի Գետիկ*) գյուղում 1916 թվականին: Նրա անձնագրում ծննդյան թիվը գրված չի եղել՝

հիմքեր չլինելու պատճառով: Երգելու արտակարգ շնորհքով օժտված աղջնակը, դպրոցն ավարտելուց հետո, 16 տարեկան հասակում մեկնել է Երևան՝ մեծ բեմում չափելու իր ուժերը:

Նրան առաջինը լսել է այն ժամանակվա ՀԽՍՀ ռադիոյի ժողովրդական գործիքների անսամբլի գեղարվեստական ղեկավար Արամ Մերանգույանը եւ անմիջապես աղջկան ընդունել իր խմբում (*1967 թվականից՝ ՀԽՍՀ հեռուստատեսության եւ ռադիոյի Ա.Մերանգույանի անվան ժողովրդական գործիքների անսամբլ*): Երկար ծամերով գեղեցկուհու հմայքով շատերն էին տարվել, բայց նույն խմբի ադմինիստրատոր Ալեքսանդր Մարտինի Դադյանին է հաջողվել տիրել նրա սրտին: Ամուսնացել են եւ ունեցել երեք զավակ (*որդի եւ երկու դուստր*): Նրանց ամուսնական կյանքը երկար չի տևել, բաժանվել են: Անսամբլից ստացած գումարով Արաքսյան չէր կարող պահել երեք երեխաներին, ամենօրյա վաստակ էր անհրաժեշտ, եւ նա համերգային շրջագայությունների է մեկնել «Հայհամերգի» Գուսան Աշոտի խմբում: Այդ ժամանակ Գուսանն արդեն ավտովթարի հետեւանքով կորցրել էր սիրելի կնոջը՝ Աշխենին: Շուտով նրանք որոշում են միավորել երկու խեղված ընտանիքի ճակատագրերը եւ 1954 թ. ամուսնն ամուսնանում են:

Սիրանույշը, որը բոլոր երեխաներից փոքրն էր, հիշում է, թե ինչ խանդավառություն ու ջերմություն էր տիրում Երևանի իրենց տանը՝ Ավ.Իսահակյանի ապրած շենքում (*ներկայիս Մախարովի հրապարակի վրա*), ապա՝ Գնունու փողոցի նոր բնակարանի երկու փոքր սենյակում, որտեղ ապրում էին վեց երեխա ու ծնողները: Նա առանձնակի ջերմությամբ արտահայտվեց իր նոր եղբայրների ու քույրիկի (*Աշոտի երեխաների*) հետ ունեցած հարաբերությունների մասին:

Սինանույշի պատմածով՝ Աշոտի դուստրը՝ Արշալույսը, պետք է ամուսնանար, սակայն բնակարանային պայմանները խիստ նեղ էին: Գուսանը դիմում է գրում ՀԿԿ Կետկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանին, խնդրում է, որ առողջական խնդիրներ ունենալու պատճառով իրեն բնակարան հատկացնեն ցածր հարկում: Նրան տալիս են նոր բնակարան՝ Կասյան փողոցի վրա, ամուսիններով տեղափոխվում եւ բնակվում են այնտեղ: Ի դեպ, այդ տանն էլ Գուսանը մահացել է:

Արաքսյայի երեխաներից ավագը՝ Սյուզաննա Դադյանն է (*1943 թ. ծնված*), ավարտել է Երևանի թատերական ինստիտուտը, անվանի դերասանուհի էր: Աշխատել է նախ՝ դրամատիկական, ապա՝ ռադիոթատրոնում, մանրապատումների հեռուստատեսային թատրոնում: Կյանքի վերջին տարիներին հանրապետական ռադիոյում եղել է հաղորդավար: Մահացել է 1997 թվականին, թաղված է Երևանում: Ունի դուստր՝ Գայանե, ով մանկավարժ-բանասեր է:

Որդին՝ Սեյրան Դադյանը (*1945 թ. ծնված*) նույնպես դերասան էր, եղել է աճապարար: 2010 - 2011 թվականներին ծանր հիվանդացել է, ծախսերը հոգալու համար վաճառել է Երևանում ունեցած իր բնակարանը, տեղափոխվել Մոսկվա՝ բուժվելու: 2012 թվականին այդտեղ էլ կնքել իր մահկանացուն, թաղված է Մոսկվայում: Ունի որդի եւ երկու դուստր:

Կրտսեր դուստրը՝ Սիրանույշը (*1947 թ. ծնված*), թոշակի անցած մանկավարժ-բանասեր, բնակվում է Հրազդան քաղաքում, ունի որդի եւ դուստր: Որդին հանրապետության ռազմական ոստիկանությունում հոգեբանության մասնագետ է:

Գուսանի մահից հետո Արաքսյան բնակվել է Կասյան փողոցի վրա գտնվող բնակարանում:

Ֆինանսական դժվարին պայմանների պատճառով մի քանի տարի հետո փոխել է այն, ապրել Նորքի զանգվածում: Կյանքի վերջին երկու տարում առողջական վիճակը վատթարացել է, դուստրը նրան տեղափոխել է իր մոտ՝ Հրազդան քաղաք, որտեղ էլ 2006 թվականին, 90 տարեկան հասակում, մահացել է:

Սիրանույշը պատմեց, որ մինչև կյանքի վերջին օրը մայրը հավատում էր, որ իր աճյունը կտանեն եւ կամփոփեն Աշոտի կողքին: Ցավում է, որ այդպես չեղավ: Արաքսյա Ղալեյանը թաղված է Հրազդանում:




Արաքսյան Սյուզաննայի և Սեյրանի հետ



Սյուզաննա Դադյանը «Սենյակ» ներկայացման մեջ,
(1948 թ.):

հեռուստաթատրոն:



Սյուզաննան (աջից) իր դասախոս Հրաչյա Ներսիսյանի հետ (1948 թ.):

Սեյրան Դադյան

Այսքանը, որ կարելու էր: Կարծում եմ՝ Գուսանի երգն ու ժողովրդական, աշուղական արվեստն ավելի կշահեն նույն նպատակին ուղղված մեր գործունեության համադրությամբ:

Ստեղծագործական նորանոր հաջողություններ՝ «Սյունյաց երկրին»:

Գագիկ Հայրումյան